

«Գրին օրգանիկ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Օրգանական պարարտանյութերի և կենսազագի
արտադրության գործարանի

**Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվետվություն**

Կատարող՝
«Քոնսեկոարդ» ՍՊԸ տնօրեն՝



Վ. Թևոսյան

Երևան – 2024

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ _____	4
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ _____	5
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ _____	7
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ _____	9
3.1. Տարածքի նկարագրությունը _____	9
3.2. Տարածքի սեյսմիկ բնութագիրը _____	10
3.3. Կլիմայական պայմանները _____	11
3.4. Օդային ավազան _____	15
3.5. Ջրային ռեսուրսներ _____	15
3.6. Հողածածկ _____	19
3.7. Կենսաբազմազանություն _____	20
3.8. Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ _____	20
3.9. Սոցիալական պայմանները _____	21
4. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ _____	22
4.1. Զրոյական տարբերակ _____	22
4.2. Քննարկվող տարբերակներ _____	22
5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ _____	23
5.1. Ընդհանուր տեղեկություններ _____	23
5.2. Օգտագործվող հումքը _____	24
5.3. Տեխնոլոգիական գործընթացները և սարքավորումը _____	25
5.3.1. Հումքի տեղափոխումը _____	25
5.3.2. Կավիտացիայի տեղամաս _____	27
Կենսազազի չորացուցիչ EnerDryer _____	33
6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ _____	37
6.1. Արտանետումներ _____	37
6.1.1 Կենսազազի այրում _____	37
6.1.2 Պինդ նյութերի արտանետումներ _____	38
6.1.3 Գեպրնամերձ կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքները _____	40
6.2 Զրոգտագործում և ջրահեռացում _____	42
6.3. Սոցիալական ազդեցությունը _____	43
6.4. Աղմուկ _____	44
6.5 Թափոնների առաջացում _____	44
6.6 Առողջապահական գործոններ _____	46
6.7. Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն _____	46
7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ _____	47
8. ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ _____	49

9.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ _____	51
9.1.	Հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերը _____	51
9.2.	Մթնոլորտային օդ _____	51
9.3.	Ջրային ռեսուրսներ _____	52
9.4.	Թափոնների կառավարում _____	52
9.5.	Կենսաբազմազանություն _____	52
9.6.	Սոցիալական խնդիրներ _____	52
9.7.	Աշխատանքի անվտանգություն և հնարավոր արտակարգ իրավիճակներ _____	53
10.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ /ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ/ ԾՐԱԳԻՐ _____	53
	Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծրագիր _____	55
	Հավելված 1. Անշարժ գույքի սեփականության վկայական _____	58
	Հավելված 2. Օդի և հողի փորձազննման հաշվետվություն _____	62
	Հավելված 3. Գետմաներձ կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքներ _____	64

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

«Գրին օրգանիկ» ՍՊԸ -ի կողմից Երևան քաղաքի «Էրեբունի» համայնքի (նախկին «Մխկոմբինատ») արդյունաբերական գոտում, Արին Բերդի 3-նրբանցք 6/2 հասցեում, /նախկին ասֆալտի գործարանի տարածքում/ նախատեսում է կազմակերպվել օրգանական պարարտանյութերի արտադրություն: Ասֆալտի գործարանի հետ կնքվել է վարձակալության պայմանագիր՝ տարածքի օգտագործման համար:

«Գրին օրգանիկ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվող գործունեության անվանումն է՝ օրգանական պարարտանյութերի և կենսագազի արտադրության կազմակերպում: Գործունեության նպատակն է գյուղատնտեսության համար էկոլոգիապես մաքուր պարարտանյութերի արտադրություն օրգանական գյուղմթերք աճեցնելու նպատակով, ինչպես նաև սեփական պահանջների համար կենսագազի միջոցով էներգետիկ ռեսուրսների ապահովում, հետագայում նաև դրանց վաճառք:

Ընկերության կողմից օրգանական պարարտանյութերի և կենսագազի արտադրության նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) և ՇՄԱԳ հաշվետվությունը մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և շրջակա միջավայրի նախարարության կողմից տրված տեխնիկական առաջադրանքի պահանջներով, ինչպես նաև էկոլոգիական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համապատասխան (տես՝ հաջորդ բաժիններում):

Աշխատանքային նախագծի ՇՄԱԳ հաշվետվությունը ներառում է՝

- նախատեսվող գործունեության նկարագիրը, ֆիզիկական բնութագիրը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, օգտագործվող նյութերի, արտանետումների, արտահոսքերի, թափոնների ծավալները, ֆիզիկական ներգործությունների մակարդակը,

- նախատեսվող գործունեության հնարավոր տարբերակների, այդ թվում նաև հրաժարման (գրոյական) տարբերակի նկարագիրը, ընտրված տարբերակի հիմնավորումը,
- հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի և բնական պայմանների նկարագիրը, էկոլոգիական և սոցիալական հնարավոր ազդեցությունների, ռիսկերի ու օգուտների վերլուծությունը և գնահատումը,
- շրջակա միջավայրի հնարավոր տնտեսական վնասի հաշվարկը և գնահատումը,
- հնարավոր արտակարգ իրավիճակների նկարագիրը, ազդեցության ծավալները, ինչպես նաև նվազեցման, մեղմացման կամ վերացման հնարավորությունները,
- բացասական ազդեցությունների կանխարգելման, մեղմացման, նվազեցման և շրջակա միջավայրին հասցվող վնասի փոխհատուցման համար նախատեսվող միջոցառումների (շինարարության և շահագործման փուլերում) ծրագիրը,
- նախատեսվող գործունեության, հնարավոր ազդեցությունների, վերլուծությունների և գնահատումների պատկերավոր վկայություններ, մասնավորապես՝ աղյուսակներ, նկարներ, քարտեզներ, գրաֆիկներ, սխեմաներ և այլն:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունում ներկայացված նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է օրգանական պարարտանյութերի և կենսազագի արտադրության կազմակերպում: Ներկայացվող գործունեությունն իրականացվելու է «Գրին օրգանիկ» ՍՊԸ-ի կողմից Էրեբունի վարչական շրջանի, Արին Բերդի 5/7 հասցեի 3-րդ նրբանցք, 6/2 հասցեում գտնվող արտադրական տարածքում:

«Գրին օրգանիկ» ՍՊԸ-ն գրանցված է քաղաք Երևանում, Աբովյան 29/1 հասցեում:

Ընկերությունը հիմնադրվել է 2023թ. օրգանական պարարտանյութերի արտադրության համար, որի համար արդեն իսկ կատարվում են փորձնական աշխատանքներ նմանատիպ պարարտանյութերի հիման վրա: Զուգահեռաբար նախատեսվում է արտադրել կենսազագ սկզբնական շրջանում սեփական կարիքների, հետագայում էներգիա արտադրելու նպատակով:

Նախատեսվող գործունեության արտադրական տարածքն ապահովված է

ջրամատակարարման, էլեկտրամատակարարման և կոյուղու համակարգերով: Տարածքը կանաչապատված է պտղատու, դեկորատիվ ծառերով և գազոններով:

Երևան քաղաքի արդյունաբերական գոտիները, որտեղ տեղադրված են արդյունաբերական ձեռնարկությունները, այդ թվում նաև գործունեության տարածքը, ունեն ընդհանուր սանիտարապաշտպանական գոտի:

Նախկին ասֆալտի գործարանի տարածքը, որտեղ ընկերության կողմից ներկայումս իրականացվում է արտադրական գործընթաց, գտնվում է բնակելի թաղամասերից 1.4 - 1.8 կմ հեռավորության վրա (Էրեբունի բնակելի թաղամասից՝ մոտ 1.8 կմ, Խարբերդ բնակելի թաղամասից՝ մոտ 1.4 կմ):

Նախագծվող արտադրամասից 430 մ հեռավորության վրա գտնվում է «Արմենիան մոլիբդեն փրոդաքշն» ՍՊԸ-ի արտանետումների կազմակերպված աղբյուրը (ներկայումս ընկերությունը չի գործում):

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է վերլուծել և գնահատել նախատեսվող գործունեության արդյունքում արտադրական գործընթացներից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի և քաղաքային կոյուղու կոլեկտոր ուղղվող վնասակար նյութերի քանակները և տալ ամբողջական, գումարային գնահատական շրջակա միջավայրի վրա ազդեցության տեսանկյունից: Մթնոլորտային արտանետումների հաշվարկներում հաշվի են առնվել տարածքի ֆոնային տվյալները, գործող արտադրամասի վնասակար նյութերի արտանետումները:

Սույն հաշվետվությունը կազմված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի պահանջների հիման վրա:

ՇՄԱԳ աշխատանքներում հաշվի են առնվել տեղանքի բնապահպանական և սոցիալական ելակետային տվյալները, գործունեության տեխնոլոգիական բնութագրերը, օգտագործվող հումքի և նյութերի վերաբերյալ տվյալները:

ՇՄԱԳ-ում դիտարկվել են այլընտրանքային տարբերակները, ներառյալ գրոյական տարբերակը:

Գնահատվել են նախատեսվող գործունեության բնապահպանական և սոցիալական ռիսկերը, որոնց վերլուծության արդյունքում մշակվել են բացասական ազդեցությունները կանխող կամ նվազեցնող միջոցառումներ:

Աշխատանքների պատշաճ և արդյունավետ կազմակերպման նպատակով մշակվել է բնապահպանական կառավարման պլան: Մշակված միջոցառումների

արդյունավետությունը վերահսկելու համար ներկայացվել է մշտադիտարկումների (մոնիթորինգի) ծրագիր:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրքը (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրքը (04.6.2002թ.),
3. «Թափոնների մասին» ՀՀ օրենքը (24.11.2004 թ.),
4. «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենքը (07.02.2012թ.),
5. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը (01.11.1994թ. վերջին փոփոխությունը 2022թ.),
6. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (21.06.2014թ., վերջին փոփոխությունը 2023թ.),
7. «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (11.04.2005թ.),
8. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-211, 27.11.2006թ.),
9. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-52, 03.04.2000թ.),
10. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-22, 23.11.1999թ.),
11. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշումը,
12. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշումը,
13. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշումը,
14. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի

«Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշումը,

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ մասին ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781-Ն որոշում

16. ՀՀ կառավարության 8.02.2018 թ. N108-Ն որոշում «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱԶ ԳՈՏԻՆԵՐԻ ՉԱՓԵՐԻՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1318-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

17. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրամանը «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցատման տարածքներում» N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին

18. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրամանը «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին»

19. ՀՀ առողջապահության նախարարի 2009 թ. հոկտեմբերի 29-ի N20-Ն հրաման ՎՏԱՆԳԱՎՈՐ ՔԻՄԻԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆԸ ԵՎ ՓՈԽԱԴՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ N 2.1.7.001-09 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նախատեսվող գործունեության պլանավորման և հետագա իրականացման բոլոր փուլերում առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու թափոնների գործունեությունը կարգավորող օրենսդրությանը, «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներին:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի սույն գործունեությունը ենթակա է բնապահպանական փորձաքննության, քանի որ գործունեության ընթացքում նախատեսվում է վտանգավոր թափոնների վերամշակում, այդ թվում՝ հավի հնացած ծերտ (վտանգավորության IV դաս) և խոշոր եղջերավոր կենդանիների թարմ գոմաղբ

(վտանգավորության IV դաս):

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

3.1. Տարածքի նկարագրությունը

Ներկայացվող գործունեության համար նախատեսված տարածքը գտնվում է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի արդյունաբերական շրջանում: Մոտակա բնակելի թաղամասերը գտնվում են մոտավորապես 1.4 կմ՝ ուղիղ գծով հեռավորության վրա: Տեղանքի ռելիեֆը հանգիստ է: Տեղանքի նիշը ծովի մակերևույթից 927մ է: Սեյսմակայնությունը – 8-9 բալ:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Պատմաճարտարապետական «Էրեբունի» թանգարանը գտնվում է տեղանքից ≈ 4 կմ հեռավորության վրա:

Գեոմորֆոլոգիա

Ներկայացվող տեղանքը գեոմորֆոլոգիական տեսակետից ունի հարթ, որոշակի թեքությամբ ռելիեֆային բնույթ:

Լիթոլոգիական տեսակետից տարածքում կարելի է առանձնացնել հետևյալ երկրաբանական տարբերակները՝

1. Ժամանակակից ալյուվիալ-արոյուվիալ գրունտեր, ներկայացված գորշ կավավազով՝ ամուր կազմության, փթած բույսերի մնացորդներով և արմատներով:

2. Մանրախճային գրունտ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30-35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

3. Մեծաբեկորային գրունտ, խճի և մանրախճի խառնուրդով, քարակտորների արանքները լցված են մինչև 10% կավավազային և ավազային լցանյութով: Քարակտորները ներկայացված են հրաբխային ապարներով:

4. Վերին չորրորդական լճա-ալյուվիալ նստվածքներ, ներկայացված խճա-մանրախճային գրունտներով՝ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30 -35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

Տարածքում սողանքային երևույթներ չեն դիտարկվել:

Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը ոչ բարենպաստ է սեյսմիկ ազդեցության ժամանակ: Ստորգետնյա ջրերը կապված են միջլավային և լավաների տակ գտնվող հոսքերի հետ, ունեն ինֆիլտրացիոն բնույթ:


Գրունտային ջրերի առկայությունը կավային գրունտներում բացատրվում է ջրհագեցած ավազների բազմաթիվ ենթաշերտերով և ոսպնյակների առկայությամբ, որը հանգեցրել է ստորգետնյա ջրերի ցիրկուլիացիայի բարդ պայմանների և ջրատար հորիզոնների առկայության:

Աշխատանքների տեղանքում գրունտային/ստորգետնյա ջրերի մակարդակը կազմում է 2 – 6 մ:

3.2. Տարածքի սեյսմիկ բնութագիրը

Համաձայն ՀՀ-ում գործող սեյսմակայուն շինարարության նախագծման նորմերի՝ ՀՀՇՆ II-6.02-2006, տարածքը պատկանում է 2-րդ գոտում, որի սեյսմիկության քանակական գնահատականը բնութագրվում է սպասվող առավելագույն արագացմամբ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g ($\alpha = 0.4g$) հորիզոնական արագացման արժեքը, մինչև 9 և ավել բալլ սեյսմիկությամբ:

Նկար 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ ՍԵՅՍՄԻԿ ԿՏԱՆԳԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՔԱՐՏԵԶ



3.3. Կլիմայական պայմանները

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է «տաք» կլիմայական գոտում: «Տաք» գոտու կլիմայական բնութագրերն են՝ ամառ՝ շոգ, չոր, միջին ջերմաստիճանը հուլիսին՝ 21 °C, հարաբերական խոնավությունը (ժ 15-ին)՝ 35% ցածր, բարենպաստ լեռնահովտային քամիներ՝ միջին արագությունը 2,0-3,0 մ/վ : Ձմեռ՝ ցուրտ, անհողմ, միջին ջերմաստիճանը հունվարին 0 °C-ց մինչև - 5 °C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին) 60-70%, քամու միջին արագությունը՝ 2,0-3,0 մ/վ:

Քամու փչելու ուղղությունը տատանվում է և գերակա ուղղություն չկա: Հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան քամիները ավելի շատ են ապրիլին, հարավ-արևմտյան քամիները՝ հունիսին, հյուսիս-արևելյան քամիները՝ հուլիսին և հյուսիս արևելյանը՝ հուլիսին, հարավ արևելյան քամիները՝ հոկտեմբերին:

Ստորև բերված է տեղանքի իրադրային սխեման /նկար 2/, և կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների:



Նկար 2. Տեղանքի իրադրային սխեմա

Աղյուսակ 3.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Էրեբունի օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայանը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Էրեբունի	888	-3.6	-1.0	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9	-28	42

Աղյուսակ 3.2. Օդի հարաբերական խոնավությունը Էրեբունի օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
														Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12					
Էրեբունի	79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79	61	79	67	45	28

Աղյուսակ 3.3. Մթնոլորտային տեղումները Էրեբունի օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	
	Ըստ ամիսների													Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ	
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Էրեբունի	24	23	32	35	45	23	11	8	12	29	28	21	291	128	163
	24	23	34	29	42	34	29	37	51	35	36	28	51		

Աղյուսակ 3.4. Ձյան ծածկույթ էրեբունի օդերևութաբանական կայանի տվյալներով

Ձյան ծածկույթ				
Բնակավայրի անվանումը	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակ, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, մմ
Էրեբունի	58	47	-	60

Աղյուսակ 3.5. Քամու պարամետրերը էրեբունի օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/րկ ըստ ուղղությունների								Անդրորի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/րկ	Գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/րկ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-ձեռոպար ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/րկ		
		Հյուսիսային (Հս)	Հյուսիս-արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)								
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16		
Էրեբունի	Հունվար	4	9	11	14	21	25	12	4	76	0.7	Հվ	2.4.	Հվ	2.7		
		2.2	2.2	2.2	2.9	2.7	2.3	2.6	2.7								
	Ապրիլ	7	14	8	16	20	16	13	6							45	1,9
		3.1	3.2	2.8	4.0	3.1	3.0	3.8	3.6								
	Հուլիս	17	28	4	9	17	13	8	4							36	2.8
		5.2	5.7	2.8	2.7	2.4	2.7	2.9	4.3								
Հոկտեմբեր	6	17	10	10	21	20	10	5	63	1,0							
	2,9	2,5	2,1	2,5	2,3	2,4	2,9	3,5									

3.4. Օդային ավազան

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

Երևան քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 դիտակետ և 5 դիտակայան:

2022 թվականին Երևան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Իրականացված դիտարկումների 31%-ում դիտվել են փոշու, 29%-ում՝ ազոտի երկօքսիդի, 3%-ում՝ ծծմբի երկօքսիդի, 0.1%-ում՝ գետնամերձ օզոնի գերազանցումներ համապատասխան ՍԹԿ-ներից, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես բնակլիմայական պայմաններով և աղտոտման աղբյուրներով, այնպես էլ կանաչ տարածքների սակավությամբ: Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:

2022թ. քաղաքի մթնոլորտի աղտոտվածությունը (ըստ մթնոլորտն աղտոտող 4 նյութերի) միջինից ցածր մակարդակի է՝ մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը* (ՄԱՑ) 2.15 է (փոշի՝ 0.98, ծծմբի երկօքսիդ՝ 0.45, ազոտի երկօքսիդ՝ 0.61, գետնամերձ օզոն՝ 0.07):

Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է փոշու և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաների աճման, իսկ ծծմբի երկօքսիդի և գետնամերձ օզոնի՝ նվազման տենդենց:¹

Աղյուսակ 3.6. Երևան քաղաքի մթնոլորտային օդի դիտարկումների արդյունքները, 2022թ.

Որոշվող միացություն	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³ (դիտակայանի համարը)	Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ ³	ՍԹԿ միջին օրական, մգ/մ ³
Ծծմբի երկօքսիդ	0.090 (դիտ. N18)	0.022	0.05
Ազոտի երկօքսիդ	0.148 (դիտ. N7)	0.029	0.04
Փոշի	1.805 (դիտ. N8)	0.147	0.15
Գետնամերձ օզոն	0.030 (դիտ. N8)	0.006	0.03

3.5. Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

¹ <http://www.armmonitoring.am/>

կողմից:

ՀՀ կառավարության կողմից՝ «Կախված տեղանքի առանձնահատկություններից, յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75 Ն որոշում): ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

Մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 131 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական՝ մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ:

2022 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 16%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 36%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 26%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 22%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք (ՋԿՏ)

Հրազդանի ՋԿՏ-ը ներառում է Հրազդանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային կեղտաջրերը:

Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով և այլումինով: Քաղսի գյուղից ներքև ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված վանադիումով: Արգել գյուղից ներքև, Արզնի ՀԷԿ-ից վերև, Երևան 13 քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Արգել գյուղից ներքև և Արզնի ՀԷԿ-ից վերև պայմանավորված վանադիումով, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ հատվածում՝ ամոնիում, ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանում՝ ամոնիում իոնով և

վանադիումով, Գեղանիստ գյուղի մոտ՝ ամոնիում, ֆոսֆատ իոններով և վանադիումով:

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5- րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:

«Գրին օրգանիկ» ՍՊԸ տարածքի հեռավորությունը մոտակա ջրային ռեսուրսից՝ Հրազդան գետից, կազմում է 4.75 կմ:

3.6. Հողածածկ

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

Անմիջապես ներկայացվող տարածքում հողերի աղտոտվածությունը որոշելու համար 2022 թվականի հոկտեմբերին կատարվել է նմուշառում՝ գործունեության տարածքի մի քանի կետերից, նմուշը ընդհանրացվել է և տեղափոխվել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ լաբորատորիա:

Աղյուսակ 3.7. Հողի անալիզների արդյունքները

h.h	Չափված ցուցանիշ	Չափման միավոր	Չափված արժեքը
1	Լիթիում	գ/կգ	0.00391
2	Բերիլիում	գ/կգ	0.000230
3	Բոր	գ/կգ	0.0397
4	Նատրիում	գ/կգ	2.16
5	Մագնեզիում	գ/կգ	<0.01
6	Ալյումին	գ/կգ	0.40
7	Տնդհանուր ֆոսֆոր	գ/կգ	0.363
8	Կալիում	գ/կգ	1.75
9	Կալցիում	գ/կգ	1.97
10	Տիտան	գ/կգ	0.84
11	Վանադիում	գ/կգ	0.0240
12	Քրոմ	գ/կգ	0.0155
13	Երկաթ	գ/կգ	1.61
14	Մանգան	գ/կգ	0.0831
15	Կոբալտ	գ/կգ	0.00363
16	Նիկել	գ/կգ	0.0229
17	Պղինձ	գ/կգ	0.0114
18	Ցինկ	գ/կգ	0.0646
19	Արսեն	գ/կգ	0.00208
20	Սելեն	գ/կգ	0.000923
21	Ստրոնտիցում	գ/կգ	0.0310
22	Մոլիբդեն	գ/կգ	0.00183
23	Կադմիում	գ/կգ	0.000140
24	Անագ	գ/կգ	<0.01
25	Ծարիր	գ/կգ	0.000160
26	Բարիում	գ/կգ	<0.01
27	Կապար	գ/կգ	0.00334

3.7. **Կենսաբազմազանություն**

Ներկայացվող տեղանքը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանում, անապատային-կիսաանապատային գոտում:

Այս տարածքում հանդիպող բուսականության տեսակներն են՝ Մատիտեղ /երկու տեսակ, որոնցից մեկի սերմերի պատիճը ուլունքաշար է, մյուսինը՝ փնջով լոբի/, ուղտափուշ պարսկական, երկտերև, օշինդր, Կապար փշոտ, Իշառվույտ, կովի առվույտ:

Այս տարածքում հացազգիներից գերակշռում է կծմախոտը, կա անապատային Սեզ:

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է արտադրական կազմակերպության տարածքում, Երևանի արդյունաբերական գոտում, որը զուրկ է բնական բուսածածկից, դեռևս ասֆալտի գործարանի կառուցման ժամանակ հանվել է բերրի հողի շերտը, ոչնչացվել են տարածքի բուսական համակեցությունները:

Կենդանիներից տեղանքում հանդիպում են ողնաշարավորներից, լճագորտ, մողես, սովորական լորտու, տնային ճնճղուկ, մոխրագույն ագռավ, կաչաղակ, սովորական և հասարակական դաշտամուկ, մոխրագույն առնետ, անողնաշարավորներից՝ անձրևատրոդ, մրջյուն, մեղու, ծղրիդ, ճռիկ, մորեխ, փայտոջիլ, կապտաթիթեռ, մոծակ, սենյակային և դաշտային ճանճեր:

Թռչուններ՝ կոնչան բադ, եղեգնահավ, լոր, թխակապույտ աղավնի, կտցարներ:

Անմիջապես նախատեսվող գործունեության մերձակայքում չկա բնական բուսածածկև չկան վայրի կենդանիներ, համապատասխանաբար նաև չկան ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանիներ:

3.8. **Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ**

Ինչպես արդեն նշվել է անմիջապես արտադրական տարածքում և մերձակայքում չկա բնական բուսածածկև վայրի կենդանիներ, հետևաբար նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանիներ:

Դիտարկվող տարածքը չի առնչվում բնապահպանական տեսանկյունից խոցելի, կամ բնության հատուկ պահպանվող տարածքների հետ: Արտադրական գործունեությունը կազմակերպելու համար օգտագործվելու են գոյություն ունեցող ենթակառուցվածքները, հետևաբար բնական լանդշաֆտների վրա հնարավոր ազդեցությունները բացակայում են:

Տարածաշրջանի բնական էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումը ապահովվելու նպատակով տարբեր

ժամանակահատվածներում շրջակա տարածքներում կազմակերպվել են մի շարք բնության հատուկ պահպանվող տարածքներ:

Գործունեության տարածքը որևէ առնչություն չունի ԲՀՊՏ, պատմամշակութային հուշարձանների և բնության հուշարձանների հետ, իսկ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը գտնվում է տեղանքից շուրջ 3.4 կմ հեռավորության վրա:

3.9. **Սոցիալական պայմանները**

Նախատեսվող տարածքը տեղակայված է Երևանի քաղաքի Էրեբունի վարչական շրջանի արդյունաբերական գոտում:

Մայրաքաղաք Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս- արևելյան մասում: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին:

Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Մայրաքաղաքում են գտնվում ՀՀ Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, դրամատների ու սակարանների (բորսաների) ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը:

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ):

Էրեբունի վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Կենտրոն, Նոր Նորք, Նորք Մարաշ, Շենգավիթ և Նուբարաշեն վարչական շրջանների հետ: Արտաքին

սահմանագծով հարում է Կոտայքի և Արարատի մարզերին:

Տարածքը՝ 4850 հա

Բնակչությունը՝ 130.6 հազ.մարդ²:

Երևան քաղաքի շրջակա միջավայրի պահպանության համաքաղաքային լուծումներն անմիջականորեն կապված են Էրեբունի վարչական շրջանի և նրա շրջակա միջավայրի վիճակի բարելավման հետ:

Ընդհանուր առմամբ քաղաքի դիտարկվող վարչական շրջանում տեղ են գտել բազմազան հողօգտագործման ձևեր՝ բնակելի կառուցապատում, արդյունաբերական արտադրության համար նախատեսված գոտիներ, հատուկ նշանակության հողեր, հասարակական նշանակության կանաչ զանգվածներ, լանդշաֆտային գոտի, կոմերցիոն բնույթի օբյեկտներով կառուցապատված գոտի, բուժառողջարարական հաստատություններ, ուսումնական հատուկ նշանակության օբյեկտներ և այլն:

4. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

4.1. Ջրոյական տարբերակ

Ջրոյական տարբերակ՝ նշանակում է, որ՝ նախագիծը չի իրականացվում: Եթե օրգանական պարարտանյութերի և կենսագազի արտադրությունը չի իրականացվում, ապա տարածքը չի ենթարկվի նախատեսված գործունեության հետևանք հանդիսացող արտանետումների, արտահոսքերի և այլ գործոնների ազդեցությանը ու առկա բնապահպանական պայմանները չեն փոխվի:

Միևնույն ժամանակ չեն շարունակվի գյուղատնտեսության զարգացմանը ուղղված միջոցառումներ, չի արտադրվի էլեկտրական էներգիա, որը կարող է մեծացնել էներգետիկ անվտանգության (անկախության) աստիճանը:

4.2. Քննարկվող տարբերակներ

Քանի որ ներկայացվող նախաձեռնության նպատակը օրգանական պարարտանյութերի արտադրությունն է, ուստի քննարկվել են միայն այդ արտադրության տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների այլընտրանքները:

Կենսաբանական ակտիվ նյութերի խմորումը կարող է իրականացվել երկու եղանակով.

1. Առաջին եղանակը նախատեսում է կավիտացիոն խառնիչների օգտագործում,

² <https://www.armstat.am/file/doc/99542113.pdf>

որտեղ քիմիական-կավիտացիոն պրոցեսները իրականացվում են թիակների միջոցով: Օրգանական նյութերի կենսաբանական ակտիվացման այս մեթոդը լավ զարգացած է արդյունաբերական մասշտաբով:

2. Երկրորդ եղանակը հիմնված է էլեկտրահիդրավլիկ հարվածային կայանքների օգտագործումը վրա, որտեղ միջուկի հիդրոմեխանիկական, հարվածային ալիքային խառնման արդյունքում ձևավորվում են քիմիական-կավիտացիոն պրոցեսներ: Օրգանական նյութերի կենսաբանական ակտիվացման այս մեթոդը նախկինում չի կիրառվել, սակայն ունի կիրառման ամենալայն հեռանկարներ:

Քննարկվող եղանակների բնութագրերի համեմատությունը

<i>Տարբերակ 1. Կավիտացիոն խառնիչներ</i>	<i>Տարբերակ 2. Էլեկտրահիդրավլիկ եղանակ</i>
1.1. Նյութերի նախնական մանրացման անհրաժեշտություն	2.1. Նախնական մանրացում չի պահանջվում
1.2. Պահանջվում է նյութերի նախնական տաքացում	2.2. Նախնական տաքացում չի պահանջվում
1.3. Հիմնական սարքավորումը՝ կավիտացիոն խառնիչ 1 մ ³ աշխատանքային ծավալով	2.3. 36141A մակնիշի էլեկտրահիդրավլիկ կայանք 2.4. Էլեկտրաէներգիայի տեսակարար ծախս՝ 5-10 կՎտ/մ ³
1.4. Էլեկտրաէներգիայի տեսակարար ծախս՝ 45-90 կՎտ/մ ³	2.5. Էլեկտրական էներգիան մեխանիկականի փոխակերպման Օ.Գ.Գ.՝ 80-85%.
1.5. Էլեկտրական էներգիան մեխանիկականի փոխակերպման Օ.Գ.Գ.՝ 10-15%.	2.6. Տեղամասի աշխատանքային ռեժիմը՝ 12 ժամ/օր
1.6. Տեղամասի աշխատանքային ռեժիմը՝ շուրջօրյա	

Առաջին տարբերակը ավելի ծախսատար է, սակայն քանի որ երկրորդ տարբերը դեռ շատ ուսումնասիրված չէ և ստույգ հայտնի չի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև շահագործման ընթացքում հնարավոր բարդությունները, ընտրվել է առաջին տարբերակը:

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Ընդհանուր տեղեկություններ

Ներկայացվող գործունեությունը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի արդյունաբերական գոտում՝ Արին Բերդի փողոց 5/7 հասցեի 3-րդ նրբանցք 6/2:

Տարածքը հանդիսանում է «Ֆայլվորդ» ՍՊԸ սեփականությունը (վկայականի

պատճենը կցվում է սույն հաշվետվության հավելվածների մասում): Տարածքի մակերեսը կազմում է 1.3934 հա: Տարածքի որոշ մասը վարձակալությամբ օգտագործում է սույն հայտի ձեռնարող «Գրին օրգանիկ» ընկերությունը:

Տարածքի մերձակայքում գտնվում են միայն արտադրական և պահեստային տարածքներ և շինություններ:

Վարձակալված տարածքն ապահովված է ջրամատակարարման, գազամատակարարման, կոյուղու և էլեկտրամատակարարման համակարգերով: Ջրամատակարարումը իրականացվում է Վեոլիա ջուր ընկերության ջրատարից, կոյուղին միացված է Երևանի քաղաքային կոյուղատարին:

Արտադրական մասնաշենքը ապահովված է ինչպես բնական օդափոխության համակարգով /դեֆլեկտորներ/, այնպես էլ օդամղիչով, որը մասնաշենքի օդը մղում է դեպի դուրս:

5.2. Օգտագործվող հումքը

Որպես օրգանական պարարտանյութերի և կենսագազի արտադրության հումք նախատեսվում է օգտագործել հետևյալ թափոնատեսակները

- «Հացահատիկի մեխանիկական մաքրումից առաջացած թափոններ /հացահատիկային թափոքբեր/», դասիչը ըստ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. թիվ 342 հրամանի գավելվածի՝ 1111020008995,
- «Սննդամթերքի շլամանման թափոններ», դասիչ՝ 1113300004005
- «Պահածոյացված և սառեցված մթերքի մնացորդներ /միրգ, բանջարեղեն», դասիչ՝ 1113710013014
- «Գարեջրի արտադրության շլամ և մնացորդներ», դասիչ՝ 111411004004,
- «Էթիլ սպիրտի և կերային խմորիչների արտադրության թափոններ», դասիչ՝ 1114140003004,
- «Գինեգործության նստվածքներ», դասիչ՝ 1114130003004:

Հետագայում նաև նախատեսվում է դիտարկել որպես հումք օգտագործել թոչնաբուծարանների գոմաղբը, որն ըստ N 430-Ն հրամանի հավելվածի՝ «Հավի հնացած ձերտ», վտանգավորության 4-րդ դաս, ծածկագիրը 1310010101004 և «Խոշոր եղջերավոր կենդանիների թարմ գոմաղբ», վտանգավորության 4-րդ դաս, ծածկագիրը 1310040103004:

Հումքի բնութագրերը.

- ալրաղացների մնացորդներ, թեփ և ցորենի այլ մասնիկներ, խոնավությունը \approx 3-5%,
- խմիչքների արտադրության մնացորդներ՝ բարդա, ազատ և կապված խոնավության

պարունակությունը $\approx 75\%$.

- սպիրտային բարդա, խոնավությունը $\approx 90\%$.
- բուսական և սննդային մնացորդներ՝ խոնավությունը $\approx 5-10\%$.

Հումքի ընդհանուր քանակը (խոնավ և չոր)՝ 60000 – 70000 տ/տարի:

Օժանդակ նյութեր.

- կրակաթ՝ $\text{Ca(OH)}_2 \approx 2 - 3$ տ,
- $\text{KOH} \approx 3 - 3.5$ տ,
- $\text{NaOH} \approx 1.7 - 2$ տ,
- մոնոէթանոլամին կամ որևէ այլ ամին՝ 2.2 - 2.5 տ,
- բենզոլ՝ 70 տ/տարի:

5.3. Տեխնոլոգիական գործընթացները և սարքավորումը

5.3.1. Հումքի տեղափոխումը

Ալրաղացների ցորենի թափոնը, սննդային և մթերքի վերամշակման մնացորդները տեղափոխվում են պլաստիկ պարկերով, խմիչքների արտադրության մնացորդները հեղուկատար մեքենաներով, իսկ ծերտը և գոմաղբը բազմակի օգտագործման փակ կոնտեյներներով: Տեղափոխումը կարող է իրականացվել ինչպես վաճառողի, այնպես էլ «Գրին օրգանիկ» ընկերության տրանսպորտային միջոցներով:

Հումքի տեղափոխման համար նախատեսված են 3 հատ բեռնատար քարշիչ, 3 հատ ջրատար տարողություն /ցիստեռն/ և 3 հատ կցորդ.

Ստորև հեղուկ մնացորդների տեղափոխման համար նախատեսվող տրանսպորտային միջոցների պատկերն ըստ նույնանման ՌԴ գործարանի:



Հումքի և նյութերի պահեստավորումը

Գարեջրի արտադրության հեղուկ մնացորդները, գինեգործական մածուկի կամ դրա ֆերմենտացման արտադրանքի ընդունումը, որը մատակարարվում է ինքնաթափով, իրականացվում է «ընդունիչ խցիկի» մեջ, որը հագեցած է բեռնաթափման պտուտակավոր փոխակրիչով և խցիկներից օրգանական

մնացորդները լվանալու սարքով /ստորև/:



«Ընդունող խցիկը» բետոնե կոնստրուկցիա է ≈ 30 մ³ աշխատանքային ծավալով:

Բեռնաթափման պտուտակն ապահովված է 5.5 կՎտ/ժամ հզորությամբ փոխանցման շարժիչով նոմինալ հզորությունը ≈ 30 տ/ժամ:

Ալկոհոլային խմիչքների արտադրության մնացորդները մատակարարվում են ավտոդիստեռններով, ընդունվում են միջանկյալ տարողությունում:



ՎԺԻ-30/60



Սորուն նյութերի ընդունման, պահպանման և սնուցման համար (օրինակ՝ կիր, բույսերի մնացորդներ դաշտերից և խաղողի այգիներից) օգտագործվում է ծածկված բետոնապատ տարածք՝ $\approx 300-500$ մ² ընդհանուր մակերեսով:

Բույսերի մնացորդները մանրացվում են հետևյալ սխեմայով.

- 10-20 տ/ժամ հզորությամբ ստացիոնար մաղ
- 10-20 տ/ժամ արտադրողականությամբ 2 փոխակրիչ
- Ստացիոնար ջարդիչ, հզորությունը 10-20 տ/ժամ = 1 հատ.

Նյութերը պահեստի ներսում տեղափոխելու համար այն սպասարկվում է Bob-Cat բեռնիչով = 1 հատ:

	 <p>Շարժական փոխակրիչ</p>	 <p>Շրեդեր</p>
	<p>Գնդիկային ջարդիչ $\varnothing 900 \times 1800$ Թմբուկի արագությունը 42 պտ/րոպե Զանգվածը՝ 1,4 Խ Ջարդման մանրությունը՝ 0.075-0.89 մմ</p>	 <p>Bobcat</p>

5.3.2. Կավիդրացիայի տեղամաս

Նախապատրաստման հանգույց

Հանգույցը նախատեսված է նյութերի խառնուրդի կազմավորման համար: Այստեղ ապահովվում են քիմիական բաղադրությունը և ջրային միջավայրը: Հանգույցի սարքավորումները բաղկացած են հետևյալ մասերից.

- ավազան (հերմետիկ) ալկոհոլային լուծույթի ընդունման, պահպանման և չափաբաժնով մատակարարման համար, 500 մ³ աշխատանքային ծավալով:
- սպիրտային մնացորդների օրական չափաքանակի տաքացման տարողություն (100մ³), որը տաքացվում է սեփական արտադրության մեթան գազով: Լուծույթը տաքացվելու է մինչև 60°C: Տաքացումը կատարվում է կաթսայի միջոցով, որի հզորությունը կազմում է 10 մ³/ժամ:



RS-H-300 գազային կաթսա

- Գազի ճնշումը՝ 0.6 կՊա
- Գազի առավելագույն ծախսը՝ 36 մ³/ժամ
- Առավելագույն ջերմային հզորությունը՝ 300 կՎտ
- Արտադրողականությունը՝ 10մ³/ժամ

Կավիտացիայի հանգույց

Հացահատիկի մնացորդների (թափոն), մանրացված սննդային թարմ թափոնների հետ միասին փոխարկիչով համալրված պտուտակավոր սնուցիչի միջոցով տրվում են գնդիկավոր ջարդիչ: Այս նյութերի հետ միաժամանակ տրվում են սպիրտային լուծույթի դոզավորված ծավալներ: Խառնուրդը NPSH-32 պոմպի միջոցով մղվում է ընդունող և բաշխող Vwork -20 մ³ աշխատանքային ծավալով տարաների մեջ: Մեկ տարան սպասարկում է 2 կավիտացիոն խառնիչներ, որոնք աշխատում են հաջորդաբար:

Քիմիական-կավիտացիոն մշակման բաժինը՝ 200 մ³ հզորությամբ, համալրված է հետևյալ տեխնոլոգիական սարքավորումներով.

- Կավիտացիոն քիմիական խառնիչ KSKH-1/75-90 մակնիշի, 1.5 մ³ աշխատանքային ծավալով, շարժիչի 75–90 կՎտ/ժ հզորությամբ՝ 10 կոմպլեկտ;
- Ռեագենտների մատակարարման շնեկային սնուցիչներ՝ 5 կոմպլեկտ,
- հեղուկ խառնուրդի մղման 5մ³/ժամ արտադրողականությամբ НПШ-32 մակնիշի 5 պոմպ,
- 5 միջանկյալ տարողություններ V-1մ³ ծավալով յուրաքանչյուրը,
- 5 հատ 20մ³ տարողությամբ բաքեր աշխատանքային խառնուրդի ընդունման և դոզավորման համար = 5 հատ,

Դոզավորված աշխատանքային խառնուրդը ռեագենտների հետ միասին տրվում է կավիտացիոն խառնիչ:



- КС-1,5/75 մակնիշի կավիտացիոն խառնիչ Աշխատանքային ծավալը = 1,5 մ³;
- Շարժիչի հզորությունը = 75 կՎտ/ժամ (հնարավոր է մինչև 90 կՎտ/ժամ)
- Կոշտ թափոնների բեռնում՝ ուղղահայաց ամբարձիչ;
- Արտադրողականություն = 1.5 մ³/ժամ

Կավիտացիոն ռեակտորի շահագործման սկզբունքը.

Տարայի ստորին գոտում թիակների շարժման շնորհիվ տեղի է ունենում նյութերի ինտենսիվ խառնում, որի արդյունքում առաջանում են վակուումային պղպջակներ:

Կավիտացիոն մանր պղպջակները պայթում են առաջացնելով բարձր ճնշման տիրույթներ (400-500 Atm), որում ջերմաստիճանը կարող է հասնել 1500°C:

Միևնույն ժամանակ ջերմային և քիմիական պրոցեսները ակտիվորեն տեղի են ունենում խառնիչի գործարկումից հետո 2 ժամվա ընթացքում և լուծույթի ջերմաստիճանը բարձրանում է 10-ից մինչև 100°C:

Իոնացված ջրի ակտիվ առաջացումը H-1 և OH+1 իոնների առկայությամբ նպաստում է քիմիական ռեակցիաների արագացմանը:

Լուծույթի մշակման ժամանակը տատանվում է 30-ից 45 րոպեի սահմաններում (սպիրտի նախնական տաքացման պարագայում):

Նյութի կավիտացիոն-քիմիական մշակման գործընթացի ավարտին տաք զանգվածը /պուլպան/ թափվում է ընդունող բաքի մեջ և պոմպի միջոցով մղվում է տարայի մեջ խմորման և նստեցման համար:

Օրգանական նյութերի մեխանիկական կավիտացիայի մշակման ավարտին արտահոսքի փականը բացվում է, և պուլպային լուծույթը լցվում է միջանկյալ տարողություն, որից պոմպի միջոցով մղվում է հագեցած պուլպայի բաք:

- Պուլպան NPS-32 մակնիշի պոմպի միջոցով մղվում է նստեցման պարզարան:

Նստեցման գործընթացի ավարտին (1-2 օր) նյութը գրավիտացիոն ուժերի ազդեցությամբ բաժանվում է 3 մասի.

- առաջինը (վերին մասը ծավալով $\approx 1/3$) ոչ կոլոիդային լուծույթ է. «Արմենիա Գում-1» պարարտանյութ;

- երկրորդը (միջին մասը $\approx 2/3$ ծավալով) կոլոիդային լուծույթ է՝ օրգանական նյութերի և հումաթների համեմատաբար բարձր պարունակությամբ (խոնավությամբ $\approx 68-70\%$);

- երրորդը (ներքևի մասը ծավալով $\approx 1/50-1/100$) հանքայնացված նստվածք է:

- Նստեցման գործընթացի ավարտին (պատրաստի արտադրանք «Արմենիա Գում-1») մղվում է ընդունող և բաշխող տարայի մեջ:

- Կոլոիդային լուծույթը («Արմենիա Գում-1» արտադրանքի արտադրական գործընթացի մնացորդը) մղվում է OМУ-BAVgum-ի խմորման և արտադրության տարայի մեջ, որտեղից մղվում է խմորման ռեակտորի մեջ:

- Հանքային նստվածքը տարողությունից հանվում է ստորին արտահոսքի փականի միջոցով և տրվում լվացման: Լվացված հանքային նստվածքը իրենից ներկայացնում է ավազային զանգված և նախատեսվում է վաճառել շինարարական կազմակերպություններին: Օրգանական-հումատի լուծույթի մնացորդներ պարունակող լվացման ջուրն ուղարկվում է նախատաքացման բաք՝ տեխնոլոգիական գործընթացում հետագա օգտագործման համար:

Խմորման տեղամաս

Կոլտիդային լուծույթի մոտավոր բաղադրությունը ներկայացված է ստորև.

H ₂ O	N	P ₂ O ₅	K ₂ O	Na ₂ O	MgO	CaO	SO ₃	Օրգանական միացություններ
70-75 %	1,8%	2,5%	4,1%	0,5%	0,6%	5,4%	0,3%	15,40%

Խմորման գործընթացի հիմնական ցուցանիշներն են

- Ph > 7,5;
- խմորումը անաերոբ /առանց մթնոլորտային թթվածնի/;
- ակտիվ խմորման գործընթացների համար անհրաժեշտ է պահպանել աշխատանքային միջավայրի ջերմաստիճանը՝ + 30° - + 55°C սահմաններում, ինչպես նաև ապահովել լուծույթի ստորին շերտերի պարբերական (կամ շարունակական) խառնումը վերին շերտերի հետ.
- արտադրված կենսազազի ծավալը ուղղակի կախված է միջուկում չլուծվող օրգանական նյութերի պարունակությունից (անաերոբ միկրոօրգանիզմների համար սննդարար միջավայր):

Նախատեսվում է 1 աշխատանքային օրում արտադրել մինչև 250 մ³ կենսալուծույթ: Կենսաֆերմենտացման ժամանակը ≈ 5-7 օր: Այսպիսով, 8-րդ օրը խմորման բաքը դատարկվում է և բեռնվում է կենսալուծույթի նոր չափաքանակ:

Յուրաքանչյուր տարողություն համալրված է. կենսազազի դուրս բերման խողովակով, ցածր ճնշման անվտանգության փականով (0.95 մթն), բարձր ճնշման անվտանգության փականով (1.15 մթն); ջրահեռացման ելքային խողովակով (DU-50), որը տեղադրված է տարողության հատակին; NPSH-50 պոմպով:

Միջին հաշվով 1մ³ կենսալուծույթից արտադրվում է 50-60մ³ կենսազազ: Կայանքի միջին արտադրողականությունը կկազմի՝ 1550 մ³/ժամ:



Պատրաստի արտադրանքի տեղամասը

Կենսաֆերմենտացման գործընթացից հետո օրգանական նյութերի լուծույթը /«Արմենիա BAV-Gum-1»/ մղվում է 200 մ³ ծավալով բաքի մեջ: Պոմպային համակարգը լրացուցիչ համալրված է գտիչով: Արտադրանքը առաքվում է գնորդներին ավտոոցիստեռներով, որոնք կցվում են 200 մ³ ծավալով բաքից հատուկ խողովակի միջոցով:


Կենսագազի մշակում

Կենսագազի մոտավոր կազմը

CH ₄	CO ₂	N ₂	H ₂	CO	H ₂ S	H ₂ O
52-68%	43-27%	0-3%	0,01-0,02%	0,01-0,02%	1-3%	2-4%

Կենսագազը մղվում է հատուկ բաքերի մեջ:

Կենսագազի կուտակման տեղամաս



Ռեակտորներից կենսազազը դուրս է գալիս ջրային գոլորշիներով հագեցած վիճակում: «Հում» կենսազազը ջրային գոլորշու և մեթանի (CH_4), և ածխածնի երկօքսիդի (CO_2) հետ միասին պարունակում է նաև որոշ քանակով ջրածնի սուլֆիդ (H_2S): Ջրածնի սուլֆիդը պատճառ է դառնում ագրեգատների արագ կոռոզիայի, նաև այրման ժամանակ դրանք առաջացնում են ծծմբի երկօքսիդ SO_2 և փոքր քանակով ծծմբի եռօքսիդ, որն արագ փոխակերպվում է ծծմբի երկօքսիդի:

Կենսազազի վերամշակման առաջարկվող եղանակը ներառում է մաքրման և տարանջատման եռաստիճան համակարգ.

- առաջին փուլում տեղի է ունենում կենսազազի «կրիոգեն» չորացում (հովացում մինչև $T \approx 10-15^\circ\text{C}$) ջրի գոլորշիների խտացումով ($\approx 90\%$).
- երկրորդ փուլում կենսազազը մաքրվում է ջրածնի սուլֆիդից ակտիվացված ածխածնով լցված կլանման /ադսորբցիոն/ աշտարակում, ծծմբի կլանման աստիճանը տատանվում է 250-ից մինչև 520 կգ /1 մ³ ակտիվացված ածխի հաշվարկով;
- երրորդ փուլում կենսազազը բաժանվում է մեթան գազի և ածխաթթու գազի՝ կլանման աշտարակում՝ օգտագործելով մոնոէթանոլամինային լուծույթ:

* Մաքրված գազի /մեթան/ արտադրողականությունը ընդունվում է՝ 24.18 հազար մ³:

Կենսազազի չորանոց

EnerDryer կենսազազի չորանոցը արտադրվում է 236-ից 698 մ³/ժամ հզորությամբ: Նախատեսվում է երկու հատ չորանոց: Այս մոդելի սարքավորման տարբերակիչ առանձնահատկությունն այն է, որ դրանք կոմպակտ են և կարող են տեղակայվել ինչպես շինության ներսում, այնպես էլ բացօթյա: Սարքավորումը բաղկացած է գազ-ջուր ջերմափոխանակիչից, ջեռուցվող ջերմափոխանակիչից, ինչպես նաև ցիկլոնից: Կենսազազի հետ շփվող բոլոր բաղադրիչները պատրաստված են

չժանգոտվող պողպատից:

Կենսազազից խոնավության հեռացումը տեղի է ունենում մի քանի փուլով. գազը մտնում է էկոնոմիզատոր՝ նախնական հովացման համար, այնուհետև գազն անջատվում է կաթող կոնդենսատից, հաջորդ փուլը գազը մտնում է երկրորդ ջերմափոխանակիչ, որտեղ այն հովանում է մինչև ցողի կետ: Ջերմաստիճանը ոչ ավելի, քան 10°C և մտնում է գոլորշիների հեռացման սարք մնացորդային կոնդենսատը հեռացնելու համար:



Կենսազազի չորացուցիչ EnerDryer
Bürklin GmbH & Co. KG Oberhaching, Գերմանիա
Տեխնիկական բնութագրերը

Մակնիշը	ED 220	ED 330	ED 440	ED 550	ED 650
Գազի ծախսը, մ ³ /ժամ	236	354	472	590	698
Գազի հոսքը, կգ/ժամ	262	394	525	656	775
Ջերմաստիճանը. Դուրս եկող գազի (ամռանը), °C	26,7	27,3	26,7	27,9	28,7
Գազի հարաբերա-կան խոնավությունը, %	30	29	31	27	26
Հեռացված խոնավու- թյան շավալը, կգ	7,9	11,8	15,6	19,9	23,5
Հզորությունը, կՎտ	4	6,5	6,5	8,4	8,4

Կենսազազը մաքրվում է ջրածնի սուլֆիդից (H_2S)՝ անցնելով ակտիվացված ածխածնի շերտով: Համակարգը բաղկացած է երկու բաքերից, որոնք գործում են հերթականությամբ: Ակտիվացված ածխածնի H_2S մաքրելու հզորությունը կազմում է 200-250 կգ/մ³ է: 2800 մմ ներքին տրամագծով և \approx 5500 մմ երկարությամբ բաքը թույլ է տալիս ունենալ \approx 25 մ³ ակտիվացված ածխածնի աշխատանքային ծավալ: Ակտիվացված ածխածնի այս ծավալը թույլ է տալիս կլանել \approx 5000 կգ H_2S , որը համապատասխանում է \approx 166667 մ³ կենսազազի մաքրմանը: Տեղադրման գործառնական ժամանակը մինչև ակտիվացված ածխածնի վերականգնման անհրաժեշտությունը կազմում է \approx 333 ժամ շարունակական աշխատանք (կամ 13-14 օր):

Ծծումբը լուծվում է ածխածնի դիսուլֆիդի CS_2 , տոլուոլի $C_6H_5-CH_3$, բենզոլի C_6H_6 , անիլին $C_6H_5-NH_2$, սկիպիդարի մեջ:

Ծծմբի լուծելիությունը գ/100գ	Լուծիչի $T_{\text{եռման}}$	0°C	20°C	40°C	60°C	80°C	100°C
Բենզոլ - C_6H_6	\approx 80°C	1	1,7	3,2	6	10,5	-
Ածխածնի դիսուլֆիդ - CS_2	\approx 46°C	18,08	29,44	45	-	-	-

Ածխածնի դիսուլֆիդը ունի ամենաբարձր կլանման ունակությունը: Այնուամենայնիվ, բարձր տոկոսիկության պատճառով որպես ծծմբի լուծիչ առաջարկվում է օգտագործել բենզոլը:

Ակտիվացված ածխածինը վերականգնվում է 7 օրը մեկ անգամ (շաբաթը մեկ անգամ): Այս ժամանակահատվածում ակտիվացված ածխածինը կլանում է մինչև (15 կգ/ժամ \times 24 ժամ \times 7 օր) \approx 2520 կգ ծծումբ: Ծծմբի այս քանակը լուծելու համար անհրաժեշտ է՝ 2520 կգ՝ (0,06-0,017 կգ/կգ) \times 1,2 ավելցուկային գործակից \approx 70 տոննա բենզոլ (կամ \approx 80 մ³):

Բենզոլը, որը նախապես տաքացվում է մինչև 60-70°C ջերմաստիճանը, տրվում է փակ բաքի մեջ վերին մասում ներկառուցված խողովակի միջոցով: Բենզոլը, անցնելով ակտիվացված ածխածնի շերտով, կլանում է ծծումբը: Բաքի հատակին տեղադրված է խողովակաշար (DU-100) լուծույթը աշխատանքային տարածքից հեռացնելու համար:

Բենզոլի և ծծմբի տաք լուծույթը մղվում է մեկ այլ բաքի մեջ (Վ \approx 90 մ³), որն համալրված է ներկառուցված ջերմափոխանակիչով և լուծույթ խառնող սարքով: Լուծույթի սառեցման արդյունքում լուծույթից ծծումբն անցնում է պինդ, բյուրեղային վիճակի և նստեցվում է (ծծմբի տեսական խտությունը = 2,07 գ/սմ³, որը բենզոլի խտությունից՝ 0,876 գ/սմ³, շատ ավելի բարձր է): Ծծմբի նստվածքը շնեկային փոխակրիչի միջոցով բաքի ներքևից հանվում է: Մեկ գործընթացով արդյունահանվելու է բենզոլի բարձր պարունակությամբ 1260-2520 կգ ծծումբ:

Բենզոլից ծծմբի մաքրումն իրականացվում է տաքացնելով մինչև 80°C (բենզոլի եռման կետ): Բենզոլի գոլորշին ուղարկվում է կոնդենսացման բաք: Մաքրված ծծումբն ուղարկվում է տարավորման տեղամաս: Ըստ նույնանման արտադրությունների փորձի խխմբի մնացորդային պարունակությունը կարող՝ առավելագույնը լինել՝ 0.074 գ/մ³:

Ածխաթթու գազի անջատում

Կենսագազից CO₂-ի հեռացման մեթոդներից է CO₂-ի քիմիական սորբցիան տարբեր ամինների՝ մոնոէթանոլամինի (MEA), դիէթանոլամինի (DEA) և մեթիլդիէթանոլամինի (MDEA) ջրային լուծույթներով: Ամիններով կլանված գազը հեշտությամբ անջատվում է ջերմաստիճանի բարձրացման և ճնշման նվազեցման արդյունքում:



Կենսագազը մատակարարվում է կլանման աշտարակ, որտեղ այն շփվում է ամինային լուծույթի հետ: CO_2 -ից մաքրված բիոմեթանը այնուհետև անցնում է տարանջատիչով /սեպարատոր/, որում անջատվում են հեղուկ կաթիլները: Հագեցած ամինային լուծույթը գազազերծվում է, տաքացվում է ռեկուպերատիվ ջերմափոխանակիչում և տրվում դետորբեր՝ վերականգնման համար: Այնուհետև վերականգնված ամինային լուծույթը հովացվում է և նորից մղվում կլանման աշտարակ:

Կենսամեթանը կոմպրեսորի միջոցով ուղարկվում է ապրանքային բաքեր, որտեղից մղվում գեներատոր կամ լցվում բալոնների մեջ գնորդներին առաքելու համար: Մեթան գազի ընդհանուր արդյունահանումը օրվա կտրվածքով կկազմի $\approx 24180 \text{ մ}^3$: Տարեկան աշխատանքային օրերի նախատեսվող թիվը՝ 330 օր, համապատասխանաբար մեթան գազի տարեկան արտադրողականությունը կարող է կազմել՝ 7979.4 հազ.մ^3 :


Չոր սառույցի տեղամաս

99,97% մաքրությամբ ածխածնի երկօքսիդը մշակվում է ստանդարտ տեխնոլոգիական սխեմայի համաձայն.

- սառեցվում և սեղմվում մինչև հեղուկ վիճակ (-60°C);
- լրացուցիչ սառեցում մինչև «չոր սառույցի» վիճակ (-90°C):

Ածխաթթու գազի միջին արտադրողականությունը $\approx 344 \text{ կգ/ժ}$ է: Չոր սառույցի արտադրողականությունը կկազմի $\approx 300 \text{ կգ/ժամ}$ կամ ≈ 216 տոննա ամսական:


Ածխաթթու գազի մշակման տեղամասի տեխնոլոգիական սխեմա



Էլեկտրական էներգիայի տեղամաս

Մաքրված կենսամեթանը մղվում գեներատոր հոսանք արտադրելու նպատակով:

Որպես գեներատոր նախատեսվում տեղադրել 2 հատ TEX 2000 S | TEX 2000 գազամխողային կայանք, որի պատկերը և տեխնիկական ցուցանիշները բերված են ստորև.



- Էլեկտրական հզորություն՝ 2000 կՎտ/ժամ
- Ջերմային հզորություն՝ 2100kW
- Գազի սպառումը՝ 500մ³/ժ
- Հաճախականությունը՝ 50 Hz
- Շարժիչ՝ Siemens V12.
- Պտտման արագությունը՝ 1500:

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱՁԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

6.1. Արտանետումներ

Արտադրական գործընթացը կազմակերպելու արդյունքում ազդեցությունը մթնոլորտային օդի վրա պայմանավորված է առաջին հերթին կենսագազի այրման, ինչպես նաև նյութերի չորացման ընթացքում առաջացող արտանետումներով:

Ստորև բերված են արտանետումների ըստ տեխնոլոգիական գործընթացների:

6.1.1 Կենսագազի այրում

- Սպիրտային արտադրության մնացորդների տաքացման կաթսա, 36 մ³/ժամ, 2496 ժամ/տարի
- Չոր սառույցի արտադրության կուբային մնացորդի տաքացման կաթսա՝ 4380 ժամ/տարի, գազ՝ 12 մ³/ժամ,
- Գեներատոր՝ գազի ծախսը՝ 1007.5 մ³/ժամ:

